

ՄԱՍԻՍ

Շ Ա Ւ Ա Ր Ա Ր Ե Ր Թ

Ազգային, Գրական, Փառաբանական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻ 5

1 ՓԵՏՐՎԱՐ 1903

Բ Ա ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար քառասուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Աւստահման՝ 12 ֆրանք կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը տարագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ չ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները ձեռնման պակաս թերթ ստացած են, որոնք է իսկոյն իմացնեն տարագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատուութեան չեն առնուիր:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմանն եւ ով:

Ձեռն-ԲԵ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعایده غایده (مستیس) قریه سی اداره سی

ԲԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլս, Դալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople.



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀ ԻՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ




ՀՐԴԵՀ, ԿԵՍՆՔ, ՓՈՍՏԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՇԻՐ

Ընկերութեան դրամագրութիւն, ամբողջապէս վճարուած	10,667,667	Քրանք
1901 տարւոյ մէջ դանձուած ապահովագրիչներ ու տոկոս	54,000,000	»
Երաշխաւորութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մախասան հին տեղը

Ընդհ. ՔՆՆԻՅ
Ա. ՀԻԻՐՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ
ԹԵՈՏՈՐ ՌԵԲԵԼՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ստանալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի ազդեցութիւն մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Չեմքի, Բաքի ու Երևանի միակնոթաց մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բոլորողակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը զնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՍԻՆԿԷՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ԲԱՅՐԱ

1. Մեծ փողոց, Պոն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱՆԱԾԱԾ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամկէյին կայարանին դէմ.

ՊԱՆԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիա, Թրամկէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՍՍԻ

Չարչը Պոյու, Թ. 120.

Գասերը եւ նորոգութիւնք ձեռքով.

Կասաբեալ Երաշխաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղուզուի տունը։

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻ 5


I ՓԵՏՐՎԱՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հին Դեմֆեր. Իգնատիոս ս'Օնսըն. Յ. Գ. Մամբրեան: — Մահուան մը տալանդութիւնը. Տ. Ա.: — Ոսանիկ Տեր-Մարգարեանց (Ն. յողուած) ՄԷՐՍԷՏԷՍ: — Պշտուհին (Բանասերգծութիւն) Մ. ԱճԷՄԵԱՆ: — Նիւթերու դասաւորում. ԳՐ. ՄԱԼԽԱՍ: — Գրական Քրոնիկ. ԶԱՊԷԼ ՆՍԱՅԵԱՆ: — Մանուակը (Բանասերգծութիւն) ՖԼԱՆժԷ. Թարգմ. Լ. Ք: — Այծեմնիկի փառնը (Թերթոն) ԱՆՏՐԷ ԹԵՕՐԻԷ: — Յուշատետր:

Հ Ի Ն Դ Ե Մ Ք Ե Ր

ԻԳՆԱՏԻՈՍ ՏՕՂՍԱՆ



Թէ՛ իբրեւ մատենագիր, թէ՛ իբր առաջին հայ դէմք մը՝ եւրոպական գիրքով ու զարգացումով՝ այս նշանաւոր անձը կը ներկայանայ մեզի քանի մը համառօտ գիծերով որ հասած են մեր օրերուն:

Իգնատիոս Մօրաթճա տ'Օնսըն ծնաւ Թոտոնեան բարեկեցիկ ընտանիքէն 1740ին ի Բերա, ուր երեքտասներորդ զարու ճէնովական դաղթականութիւնէն ի վեր լուսնած էր արեւմտեան տարազ ու կենցաղ մը՝ բաւական նպատաւոր արեւելքի մայրաքաղաքին մէջ եւրոպական զարգացում մը սընուցանելու: Այդ զարգացումին գրգիռ կուտային նաեւ Ֆրանչիսկեանք ու Դոմինիկեան շրջուն քարոզիչներն, ինչպէս և դեսպանական տարրերը, որ երկու դարէ հետէ Բերայի բարձանց վրայ օթեւանած էին: Այս պատրաստութեանց մէջ՝ Իգնատիոս կրցաւ յազուրդ տալ իր յառաջգիմատէր ըզձից, որուն ընական պաշտպան եղաւ. նաեւ իր հայրը, Շուէտական հիւպատոսն Զմիւռնայի: Ըստ այսմ, բարերազդ գտնուեցաւ իր պատանհանութեան մէջ՝ թէ՛ առանին թէ՛ շրջավայրին ազդեցութեամբ աւանդով լայն կրթութիւն

մը: Մանաւանդ Արեւելեան լեզուաց բանասիրութեան միջամուխ ըլլալով՝ սկսաւ հետապնդութեամբ իմաստասիրել Արեւելքի մեծ պատմութիւնները: Իր համարյոք բնաւորութեամբը, աշխատասիրութեամբը և հմուտ անձի մը օգնութեամբ յաջողեցաւ յօրինել արեւելեան պատմութիւն մը, որ ցայն վայր կատարեալ ձեւով մը դեռ չէր խմբագրուած: Ընդ հուշ եղաւ Շուէտի դեսպանութեան առաջին թարգման, և հոն իր սաշտոնական գործերէն դուրս պարագորդ ժամերուն անինաց կ'աշխատէր բանասիրական գործերու պատրաստութեան:

1782ին դեսպանութեան աստիճանին հասնելով՝ անուանեցաւ ասպետ վազայի կարգին, քանի մը տարիէն անցաւ Բարիզ իր երկիրը կատարելագործելու համար, և հոն Մալէ—Տիւրանին և ուրիշ Ֆրանսացի քահանայի մը օգնութեամբ կարգի գնելով իր ցայնվայր հաւաքած պատմական նիւթերը՝ հրատարակեց առաջին մասն իր Ընդհանուր պատմութիւն Օսմանեան հարսութեան, 1737—1790ին, երկու մեծ պատկերազարդ հատոր: Այս երկասիրութիւնը մեծ անուն հա-

հնոց, որուն իրաւամբ արժանի ալ էր. մահ-
մետական ազգերու պատմութիւնը, կրօնքը,
օրէնքն ու սովորութիւնները խոր խղճամիտ
ու տեղագէտ քննութիւններով կը պատկերէ
հոն պատմագրական ամուր արուեստով մը:
Այս գործին առաջնորդ ընտրած էր իրեն
գլխաւորապէս Նըսըֆի Էօմէրին հաւաքումը
և Իպրահիմ Հալէպի իմամին իրաւաբանու-
թիւնը: Յետ աւարտման՝ երբ Բարիլէն Կ.
Պոլիս դարձաւ՝ Սուլթան Սէլիմ Գ. գնահա-
տելով իր այս երկասիրութիւնը, շնորհեց իրեն
մեծ պարգև ու պատիւ:

1792ին գնաց հաւ. Վենետիկի Միխիթար-
եանց վանքը և հոն ալ պարապով ուսում-
նասիրեց ու հաւաքեց պէտք եղած բանասի-
րական ու պատմական արաղձը: Հ. Միքա-
յէլ Չամչեան ու Հ. Ղուկաս Ինճիճեան՝ թուի
պէտք եղածին չափ օգնած են բանասէրին
աշխատութեանց:

Իգնատիոս ամուսնացած էր Գուլէլի Օղ-
լուի աղջկան հետ, ու իր դիզած հարստու-
թիւնը Ֆրանսայի դրամատունը պառկեցու-
ցած ըլլալով՝ 1788—92ի դէպքերուն ասուն
կորոյս այդ ստակին մեծ մասը ինչպէս և իր
կինը. գնաց Բարիլ երկրորդ անգամ և հոն
նորէն ամուսնացաւ աղնուական օրիորդի մը
հետ, ու ա՛լ բոլորովին դրականութեան
ստուաւ ինքզինքը: Արեւմուտքի այդ գիտուն
և ակադեմական ոտտանին մէջ՝ 1804ին ի
լոյս տուաւ Պասկալիան պատկեր արեւելից
անուճով գիրք մը, որ կը բովանդակէր հին
Պարսից պատմութիւնը ի սկզբանէ մինչև
դարն եօթներորդ: Բայց սրանդուխտին վախ-
ճանը վրայ հասնելով իր Պիէվրի տունին մէջ
(1807 օգոստ. 27) չկրցաւ ամբողջացունել
այդ մեծ գործը: Իր զաւակը Կարոյոս առ-
պետը՝ դեսպան Շուէտի ի Պրիւքսէլ՝ չարու-
նակեց իր ընդհատ մնացած գործերը և հրա-
տարակեց պատմութիւն Մողոլաց՝ 1821ին, և
Կովկասեան ազգաց Սեւ ու Կասպից ծովե-
րուն Հիւսիսային երկիրներու վրա ի Ժ. Դա-
րու, 1828ին:

Մօրաթմա տ'Օհանի հրապարակային ու
մատենագրական վերջին անունն էր՝ Ասպետ
Օստնի. այս օտարահնչիւն անուանն և հայ
չըջանախներէ հեռու ապրելուն պատճառով՝

Եւրոպացիներն ու մատենագէտները Յոյն
կ'անուանէին զինքը: Բայց ըստ բաւականին
հաստատեալ ու արձանագրեալ կենսագրական
ու բանաքննական վերոյիշեալ ծանօթութիւն-
ներով՝ տ'Օհան կը ներկայանայ մեզի հի-
նարու բաւական մեծ Հայ դէմք մը, գրեթէ
առաջինը 18րդ դարու Թուրքահայերուն մէջ
բուն եւրոպական ու մատենագրական կըր-
թութիւն, համբաւ և պաշտօն ստեղծներուն,
բազմահմուտ բազմաշրջի՛կ և հարո՛ւստ ազ-
նուական մը, որուն հրատարակութեանց մեծ
մասը դեռ կը վնասուին անձեռնօք Օս-
մանցիներէն ու Եւրոպացիներէն: Իր վար-
քը գրող Ֆրանսացի պատմագիրը սա դա-
տաստանը կ'ընէ իր գործերուն վրայ—«Տ'Օհ-
անի պատմական գործերը, աշխարհագրական
ծանօթութիւնները և միջին դարու կէս ան-
ծանօթագրաց վրայ տուած տեղեկութիւն-
ները ճիշդ են, թարգմանած կամ քաղած է
քանակաւորս Արարացի, Թուրք և Պարսիկ
հեղինակներէ որոնց վրայ համառօտիւ կը
խօսի իր յառաջարանին մէջ: Իր գործոյն
կէսը ծանօթութեամբ լեցուած է, որոնք բուն
պատմութեան կցորդ կարեւոր մասն են»:

Այս բեղուն անձնաւորութեան քիչերը կը
գտնենք հաւասար հին և արդի Թուրքահա-
յերուն մէջ: Հիններէն՝ միա՛յն Երեմիա Զե-
լէպի Բէօմիւրճեան և Ճամճու զատէ Յա-
կոբ Դպիրը, որ երկուքն ալ բազմահմուտ
լեզուագէտ ու մատենագիր անձեր էին,
թէպէտ անոր չափ բարձր պաշտօններու չէին
հասած, իսկ նորերէն՝ հանդուցեալ Սերովիլէն
էֆէնտին ու Նորատուկեան Վահմ. Գարիբէլ
էֆէնտին, որ թէ՛ արդեամբք թէ՛ աստի-
ճանով ու պաշտօնով կը հաւասարին տ'Օհ-
անի, որուն սակայն միշտ նուազ փառք մը
չպիտի ըլլայ Թուրքահայերուն մէջ՝ 18րդ
դարու մը միջակութենէն՝ բաւական բարձրին
ամբառնալն ամէնէն առաջ թէ՛ իբրեւ բա-
նասէր թէ՛ իբրեւ մատենագիր թէ՛ իբրեւ
դեսպանական աստիճանի բարձրացած:

Ինք է ու պիտի մնայ առաջին գիտնա-
սէր (amateur) մատենագիրը Թուրքահայե-
րուն, թերեւս նաեւ առաջին դեսպանն ու
ակադեմականը: Պոտի՛ւ իր յիշատակին:

Յ. Գ. ՄԵՐՄԵՐԵԱՆ

Վերջին պահուն ստացանք

ՇՈՎ-ՄՈՎ ՄՅԱՆՈՒՄՆԵՐ

ԲՐԻՉԱՆՅԷՄԼԻ

զոր պիտի հրատարակենք Մասիսի յաջորդ
թիւով:

ՊԶՐՈՒԼՆՆ

Անունիդ պէս դուն մեկ վնիս գոհար
Սեղծուած ես լոկ փայելու համար .
Հրապուրելու ձիւքն ունիս մոգիչ,
Գոյսրիկ քեզի պէս համբանով եմ քիչ:

Վէս կերպարանգովդ ուր որ երեւնաս
Ծափերու մեջսեղ քեզ կ'ընեն դարպաս .
Երբոր կը պարես՝ ոտերքդ մանրիկ
Կը յարուցանեն յուզում ու մրբիկ:

Կենցաղասերներ, անառակ՝ հրլու
Մրցին մասերնուդ ծայրն համբուրելու:
Երբեմն աշխարհիկ փառքիդ գազաքեն
Մեղկ աչներդ զիս ալ գգուեն ու դիւքեն:

Օհ, ի գուր Է այդ պչրանքի զեղծում .
Սիրերը մաւած, չունին բաբախում .
Ինձ համար փայլի ժպիսդ ալ աղուոր՝
Սառույցին վրայ ինչպէս շողմ անգոր:

Դեռ նոր կ'ողջունես կեանքին առաւօս
Ու չես նժմարեր վերջալոյսն աղօս .
Երբ հովը վարդին քերթերը քրճէ՝
Կմախքը մնայ չոր ու սուր փրճէ:

Սիրեր փեռսելով կը զբօսնուս անհոգ,
Սակայն տարիներ խոյս տան անողոք .
Երբոր այտերուդ ծաղիկը քողմի
Ո՛վ պիտի յիշէ քու գեղդ վաղեմի:

Մ. ԱՃԷՄԵԱՆ

ՈՍՏԱՆԻԿ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆՅ

(ՀԻՆԳԵՐՈՒԴ ՅՕԳՈՒԱՆ)

Ինչպէս ըսինք ասիէ առաջ, Ոստանիկ
Տէր Մարգարեանցի խարդախութիւնները
ծայր առած են այն թուականէն՝ ուր սկսած
էր աշակերտել Կրինեօնի վարժարանին: Կեղծ
աղնուականի դիրքը զոր տուած էր իրեն,
պէտք էր ամուր պահել, որովհետեւ ատով
միայն պիտի կարենար յաջողիլ: Այդ դրու-
թիւնը արդէն ընդհանուր սկզբունք մըն էր
ժամանակին բոլոր Լեւոնայի նշանաւոր բազ-
մաթիւ կրթներուն համար, որոնցմէ ամէն մէկը
կրեւակայական բարձր տիպուտ մը և կամ
պաշտօն մը տուած է իրեն՝ խարդախութեանց
ձեռնարկելէ առաջ: Ոմանք իրր իշխան ներ-
կայացած են, ոմանք իրր զեապան, ոմանք
իրր կռիւ կամ մարքիզ, և յաջողած են խա-
լել նոյն իսկ ա՛յն տեսակ անձեր՝ որոնք ար-
դէն իսկ քանի մը անգամ խարդախութեանց
զոհ դացած ըլլալով, մէկէ աւելի պատճառ-
ներ պէտք էին ունենայ նոր ծուղակի մը
մէջ չիյնալու համար:

Ոստանիկ՝ մասնաւորաբար ինքզինքը ցոյց
կու տար իրր հսկայ հողատէր մը, և զա-
ւակը ընտանիքի մը՝ որուն հարստութիւնը
անկարելի էր հաշուել: Ժամացոյցին վրայ իր
կեղծ աղնուականութեան յայտարար նշան-
ները փորագրել տուած էր, նշաններ՝ որոնք
կ'երեւային նաեւ իր այցաքարտերուն ու նա-
մակի թուղթերուն վրայ: Ունէր նաեւ նոյն
նշանները կրող կնիք մը, և աւելորդ է լսել
թէ երբեք առիթը չէր փախցնէր զանոնք ա-
ռար անոր աչքին պարզելու: Համբաւը տա-
րածուած էր այդպէսով և համեմատաբար
քիչ առեւտուան մը մէջ, Վանքի բազմաթիւ
դիրը կրցած էր հրապարակէն չորթել մէկ
միլիոն ֆրանքի մօտեցող գումար մը, զոր
ուպառած է իր վարած ճոխ ու բազմապա-
հանջ կեանքով: Իրեն յատուկ կտուք մը ու-
նէր, կը ընակէր շատ շքեղ տուն մը՝ պըճ-
նուած անասղիւս կարամիներով, օթոցնե-
րով, կապերաններով, և երբ գուրա ելլելու

ըլլար, դրամը ջուրի պէս կը սահէր ձեռքէն : Միւս կողմէ, մեծագին ընծաներ կը բաշխէր իր ծանօթներուն, երբեմն կաշառելու և երբեմն ալ սիրաշահելու համար : Շատ հեղ, այդ ընծաներուն տեղ դրամ տալու կը ստիպուէր, և աւելորդ է ըսել որ Բարիզի պէս տեղ մը մարդ կաշառել ուղղով մը՝ պէտք չէ ընաւ մտածէ թէ՛ ֆրանքները հազարաւոր թիւերով կ'իւլեն գրպանէն :

Ինչպէ՞ս, և ուրի՞շ կը գոյանար այդ դրամը : Հոս է արդէն Ոտտանիկի գլխաւոր ճարպիկութիւնը : Իր կեղծ աղնուականի բաւորանքներով կը դիմէր ա'յն տեսակ վաճառատուններ՝ որոնց վարիչները կերպով մը ծանօթ էին իր յարաբերութեանց, և կամ լսած էին թէ ահագին տարածութեամբ հողեր, կալուածներ ունի ծննդավայրին մէջ : Երբոր վստահ ըլլար թէ վաճառատան տէրը ո'ր եւ է կասկած չունի իր մասին, իսկոյն ահագին քանակութեամբ ապրանք կը սակարկէր, փոխադրել կու տար իր տունը, և մարդուն մուրհակ մը յանձնելով կ'անցնէր ուրիշ վաճառատուն մը : Հոն ալ նոյն խաղը, յետոյ երրորդ վաճառատան մը մէջ ալ նոյն վարպետութիւնը՝ մինչև որ պէտք եղածին չափ ապրանք դիզէր : Արեւելքցիք՝ չալլ ու ճոխ կեանք վարող մարդոց համբաւ մը չաւած են քիչ մը ամէն տեղ : Այդ համբաւը՝ որ անհիմն չէ արդէն, շատ նպաստաւոր էր Ոտտանիկի համար, վաճառատան տէրերը այդպէս մտածելով, երբեք չէին զարմանար թէ ինչո՞ւ այդ աստիճան մեծաքանակ գնումներ կ'ընէ, և հետեւաբար չէին կասկածեր իր վրայ :

Անգամ մը որ այդ ապրանքները տունը լեցնէր, Տէր Մարգարեանց կը սկսէր ուրիշ առեւտուրի մը : Բաղմաթիւ միջնորդներ ունէր՝ որոնք իրմէ կը գնէին չորթած ապրանքները, բնականաբար անոնց իսկական արժէքէն չա'տ վար դին մը վճարելով : Մէկ խօսքով, ապրանքը հնչուն դրամի կը վերածուէր, և ճիշդ այդ դրամն էր զոր Ոտտանիկ կը ծախսէր այնքան չալլօրէն : Կրինեօնի աշակերտած միջոցին մանաւանդ՝ այս վարպետութիւնը չա'տ յաջողած է : Այդ ատեններուն՝ անա'նկ կարծեցուցած է թէ իր ըն-

տանիքը 50,000 ֆրանքի թուակ մը կապած էր իրեն, և իր հողատէրի համբաւը ամօր հանգամանքով մը օժտելու համար պատրաստել տուած է մասնաւոր քարտէս մը՝ որուն վրայ ցոյց կու տայ եղեր իր երեւակայական 6000 հէքտարի հողային հարստութիւնը : Կրինեօնէն առաջին ելլելէն վերջ՝ իր յաւակնութիւնները աւելի մեծցած են : Բարիզի ամէնէն նշանաւոր պանդոկներէն մէկուն՝ Կառնո Օթէլի առաջին յարկին վրայ ընդարձակ բաժին մը վարձած, ինքզինքը թեկնածու ցոյց տուած է ա'յն տեսակ պաշտօններու՝ որոնց բարձրութիւնը կրնար ամէնէն կասկածոտներն իսկ ապահովցնել : Միւս կողմէ, հաւտացուցած է թէ շատ հարուստ քոյր մը ունի, ամուսնացած բարձրաստիճան պաշտօնատարի մը հետ, թէ կտակակատարն է Լոնտոնի մէջ վախճանած մեծահարուստ Հայու մը, և թէ վերջապէս ունի նշանած մը՝ որուն հետ կնքելիք մօտալուտ ամուսնութիւնը բաղմաթիւ միլիոններ պիտի բերէ իրեն :

Բոլոր այս երեւակայական պատմութիւններէն մի' միայն այդ նշանածինը ճիշդ է, ինչպէս պիտի տեսնենք յաջորդ յօդուածով մը : Իր արդէն իսկ յուզումնալից կեանքին ամէնէն յուզիչ դրուագն է ասիկա : Այդ նշանածը միակ կինը եղած է որ խառնուած է իր արկածախնդրութեանց, թէև ինք, սիրային մղուամով մը չէ՝ որ յարած է անոր : Իրեն համար, ինչպէս ամէն բան, ինչպէս ամէն մարդ, շահագործութեան առարկայ մը դարձած է այդ աղջիկը, և միշտ աշխատած է որ կարելի եղածին չափ տարածուն խօսակցութեանց ծնունդ տայ իրենց երկուքին յարումը : Ասոր պատճառը գուշակելը դժուար բան մը չէ : Աղջիկը՝ իր օժիտին քանակութեան հետ չա'տ ծանօթ էր Բարիզի մէջ, և ո'ր է վաճառատան վարիչ մը՝ այդ օժիտին տէր նկատելով Ոտտանիկը, անոր մաշկն չուտով պիտի գոյացնէր վստահութիւն մը այնչա'փ մեծ, այնչա'փ անասման՝ որչափ թերեւս Վանցի բաղդարնիկըրը չկարենար ձեռք բերել իր աղնուականի արողոտով, իր հարուստի համբաւով, իր դիրքովն ու հողերով : Այս պարագան՝ Ոտտանիկ չա'տ լաւ համբուցած էր, և նոյն իսկ իրեն հետ կը պտտցնէր

յատկապէս վարձուած ծերուկ մը՝ զոր իբր իր ստղաբայ աները կը ներկայացնէր ամէնուն։ Երբոր կառքը վաճառատան մը առջև կանգ առնէր, ծերուկը գլուխը միայն կը ցուցնէր պաշտօնեաներուն՝ և հանդարտիկ մը կը քնա- նար կառքին խորը՝ թողլով որ իր կարծեց- եալ փեսացուն ուղածին պէս խաբէ խաբխբէ խանութին մարդիկը։

Այս առասպելները իբր ճշմարտութիւն ընդունել տալու դժուար գործին մէջ՝ Տէր Մարգարեանցի գլխաւոր զօրավիգներէն մէկը եղած է Հայ սպասաւոր մը, — հաւանակա- նաբար Վանցի մը, — որուն անունը չեմ գի- տեր թէ ի՞նչ է, և զոր իր ծառայութեան առած էր Կոստա Օթէլ ընակած միջոցին։ Այդ օտարական սպասաւորը ո՛չ նուազ հե- տաքրքրութիւն հրաւիրած է իր վրայ, և չաղակրատ՝ ամէն սպասաւորի պէս, ձայնը հասած տեղը իր սիրով մասին տարածած է երեւակայելիք ամէնէն նպաստաւոր պատ- մութիւնները, անշուշտ Ոստանիկի մասնաւոր յանձնարարութեամբ։ Իր նպատակաւոր ան- զաղտնապահութեանց շնորհիւն է որ շատեր՝ որոնց մէջ գլխաւորաբար պահանջատէրեր, կրցած են ստոյգ տեղեկութիւններ քաղել Տէր Մարգարեանցի վարած ձոխ կեանքին, ընդունած անձերուն, այցելութիւններուն և յարաբերութեանցը մասին։ Անկէ կը տեղեկա- նային թէ Կոստա Օթէլի մէջ՝ Ոստանիկ օրա- կան հարիւր Քրանք կը վճարէր մի՛ միայն ընակութեան ու նախաճաշի համար, թէ իր վարձած կառքին համար ամսական 100 ֆը- րանք կու տար, թէ սա կամ նա նշանաւոր անձնաւորութիւնը կ'ընդունէր, թէ գուրդ՝ Բարիզի ամէնէն սուղ և ամէնէն համբաւա- ւոր ճաշարաններուն մէջ միայն կը ճաշէր։ Ան էր նորէն որ հոս հոն կ'ըսէր թէ ինչպէ՛ս իր աէրն ու նշանածը ընդհանրապէս իրար կը գտնէին Պուլճնի անտառին մէջ, թէ Ոս- տանիկ շաբաթը քանի՛ հեղ կ'այցիլէր անոր, և աւելի առաջ երթալով կը խօսէր Տէր Մարգարեանց ընտանիքին վրայ, կը թուէր անոր հարստութիւնը, կը նկարագրէր հողերը, վերջապէս կարելին կ'ընէր՝ իր աէրը փայլուն ցոյց տալու համար։ Եւ հարկ կա՞յ ըսելու

թէ՛ կը յաջողէր։ Մեծ ուսումներու մէջ այդ- պէս է արդէն։ Մարդու մը նկատմամբ լա-ւագոյն տեղեկութիւնները սպասաւորներու բերանը կը փնտռուին միշտ։

Ուրիշ ոչ նուազ մեծ զօրավիգ մըն ալ, — ինչպէս ըսած եմ արդէմ, — մամուլն էր։ Այդ մասին պէտք չկայ նախապէս գրուածները կրկնելու։ Աւելցնեմ միայն սա՝ թէ ի նպաստ իրեն գրուած յօդուածներ ո՛չ թէ միայն Բա- րիզի և Լոնտոնի մամուլին մէջ երեւցած են, այլ նաեւ Ադրբայճանի, Իդմիլի և Պուք- րէ՛լի թերթերուն մէջ, որոնք օրը օրին կ'ար- ձանագրէին իր յաջողութիւնները, կրցածուն չափ չափազանցելով։ Նոյն իսկ հոս, Պուլսոյ մէջ, մասնաւորաբար իր այցելութեան մի- ջոցին, Տէր Մարգարեանց բազմաթիւ դըր- ուստականներով ողջունուած է ժամանակին թերթերէն։ Բազմը միշտ ժպտած է իրեն, և ժպտած է շատ աղուոր կերպով մը։ Ամէն տեղ կրցած է յաջողիլ, ամէն տեղ համակ- րութիւն շահած է, ու սիրուած նոյն իսկ ա՛յն տեսակ անձերէ՝ որոնք պատճառներ ունե- ցած են իրմէ դժգոհելու։ Անգամ մը միայն Բազմին այդ ժպտին չէ՛ հանդիպած իր ճամ- բուն վրայ, և այդ միակ շնորհազրկութիւնը պատճառ եղած է որ աւտուան մէկը՝ Ոս- տանիկ ինքզինքը կը գտնէ պատժադատ առ- եանի մը առջև, չարագործներու մերկ նըս- տարանին վրայ, ախո՛ւր հանգրուան ուրկէ դէպիլ բանտ և բանտէն ալ դէպիլ գերեզման պիտի ուղղուէր։

Բոլոր ատենք պիտի պատմեմ իրենց ա- տենին։ Առ այժմ, պէտք է որ հոս ներկա- յացնեմ Տէր Մարգարեանցի խարդախութեանց ամէնէն գլխաւոր և ամէնէն հետաքրքրական մասը, այն յանդուգն գործառնութիւնները որոնց շնորհիւ յաջողած է 7—800,000 ֆը- րանքի արժողութեամբ գոհարեղէն շորթել Բարիզի առաջնակարգ գոհարավաճառներէն և զանոնք դրամի վերածել կարգ մը անձե- րու մեղսակցութեամբ։

Ուրեմն յաջորդով։

ՄԷԸՍԵՏԵՍ

ՄԱՀՈՒՍՆ ՄԸ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՏԻԿԻՆ ՎԵՐԺԻՆ Պ. ԿԻԼՊԵՆԿԵԱՆ

Պատրիկ Է. Կիւլպէնկեանի Տիկնոջ վաղահաս մահը յաւի ընդհանուր արտայայտութիւն մը առաջ բերաւ, նոյնքան բուռն՝ որքան անկեղծ, Պոլսոյ Հայ համայնքին մէջ, և ազահովապէս նոյն տիտուր արձագանգները պիտի հասնին հետզհետէ դաւառներէն և այն ամէն քաղաքներէն որոնց ընտանեկան շրջանակներուն մէջ ծանօթ և սիրուած անուն մը ունէր ողբացեալ Տիկին Վերժին Կիւլպէնկեան: Անցեալ չաբաթ առտու, երբ գոյժը տարածուեցաւ Պատրդիւղի մէջ ու անկէ՛ միւս արուարձանները մայրաքաղաքին, արտէքիտող թախիծ մը, կսկիծ մը կը նկարուէր ամէն դէմքի վրայ, նոյն իսկ անոնց որոնք անձա րը չէին ճանչցած վաղամեռ Տիկինը՝ բայց լսած էին իր բարի համբաւը: Եւ յուղարկարութիւնը, որ կատարուեցաւ կիրակի օրը այնքան տխրաշուք հանդիսաւորութեամբ, ընկերային ամէն դատաւարները ներկայացնող յուղարկարներու ստուար բաղմոթեան մը ներկայութեամբ, հարուստի յուղարկաւորութենէ աւելի՝ ժողովրդական յուղարկաւորութեան մը պատուաբեր երեւոյթը կ'ընծայէր, —ինչ որ քիչ յարգանք չէ մեռնողին յիշատակին, ո՛չ ալ քիչ մխիթարանք՝ տնոր դադաղին հետեւող սգաւոր սիրելիներուն, — ամուսինը, զաւլները, եղբայրները: Հո՛ն էին սկստական պաշտօնատարը, վաճառականը, սեղանաւորը, արուստադէտը, դրաւդէտը, հրապարակադիրը, Պատրիարքարանի ժողովականներ, ուսուցիչներ, Թաղականներ, Խնամակալութիւններ, Հոգարարձուներ, արհեստաւորը, խանութպանը, զպրօցական տըղաք, և կիներ: Կեղերը, իր բոլոր տափձաններով՝ արքեպիսկոպոսներէն մինչև գլուղի պարզ քահանաները՝ եկած էր մասնակցելու արարողութեան, բայց ի այն պատգամաւորութենէն զոր յատկապէս գրկած էր Ս. Պատրիարք Հայրը իր կողմէ, ի նշան յաւակցութեան:

Երեցեան Սրբազան Խօսեցաւ մէկը այն հոգեցունց դա՛րանասկաններէն որոնք ախտիւլու տեղ կը լայնեն, և յաջորդ օրն ալ, թաղման պահուն, Հիւանդանոցի մատուան մէջ, ներաէս վրդ. Դանիէլեան, Տոքթ. Տաղատարեան, և Որբանոցի սանուհի մը զգածուած շեշտերով արժանաւոր յարգանքներ մատուցին: Օրաբերութիւնը, ինքնաբերաբար ու լայնօրէն բացաւ իր էջերը՝ ողբացեալ Տիկնոջ կեանքը ու առաքինութիւնները նկարագրելու և յուղարկաւորութեան ու թաղման ամէն մանրամասնութիւնները արձանագրելու, իր վշտակութիւնն արտայայտելով այս դառն կորուստին առթիւ:

* * *

Սուգի այս ինքնարուխ ու ընդհանուր արտայայտութիւնը պարզ յիշատակութեամբ մը չենք ուզեր անցընել: Առիթը, թէև տըլտուր, ինքնին կը ներկայանայ ի վեր լուսնելու Հայ Կնոջ ձրքերը՝ իրեն ամուսին և իր բնւ մայր՝ որոնք կը յատկանշեն մեր փախուկ սեռը և զորս գերազանցապէս կը մարմնաւորէր իր անձին վրայ Տիկին Վերժին Կիւլպէնկեան: Այն թուականներուն, ուր Պատրդիւղի հայ բնակչութիւնը կը սկսէր ստուարանալ և այդ արտարձանին հայ ընտանիքները ո՛չ միայն իրենց թուական առաւելութեամբ՝ այլ մանաւանդ իրենց գաղափարակութեամբը, իրենց ընկերային ձրքերովը, կնոջական բարեգործութեանց մէջ իրենց նախաձեռնութեամբ կը սկսէին աղնիւ մրցում մը մղել անդգալարար, Բերայի ու Օրթադիւղի առաջնակարգ ընտանիքներուն հետ, Կիւլպէնկեանց և Մանուկեանց տունները, առանց բնաւ չեղելու իրենց հաճապատական յարկի բարի սովորոյթներէն՝ առաջիններէն մէկը կը հանդիսանային ընտանեկան կեանքի շնորհալիութեամբ փայլող: Կիւլպէնկեան և Մա-

նուկեան եղբայրները՝ գործի մարդու և ըն-
կերային մարդու կրկնակ յատկութիւնները
ներդաշնակել գիտցած էին, և օրիորդները՝
իրենց մտաւոր զարգացումով, իրենց վայել-
չասէր՝ բայց պարզ ճաշակներով, կազմակեր-
պիչն էին այդ առանձին տիպար կեանքին,
զորս կը հովանաւորէին պատուական ու բա-
րեգործ հայրեր։ Այդ շրջանին էր, իբր քսան
տարի առաջ, որ կնքուեցաւ Պատրիկ էֆ.
Կիւլպէնկեանի ամուսնութիւնը Օր. Վերթին
Մանուկեանի հետ, որոնք՝ ծնողական մահէն
ետքը՝ շարունակեցին պահպանել Կիւլպէնկ-
եանց տան աւանդութիւնները, իբրեւ բարե-
գործ յարկ և ազնուատոհմ ընտանիք։ Պատ-
րիկ էֆ. անձէկ կողմէ վարելով առեւտրա-
կան ու սեղանաւորական ընդարձակ գոր-
ծառնութիւններ, միւս կողմէ իր թանկագին
ժամանակին մեծ մասը կը նուիրէր Հիւանդ-
գանոցին բարելաւմանը, ինչպէս ըրած էին
իր բարեյիշատակ հայրն ու հօրեղբայրը, միւս-
նոյն ատեն խանդավառ ամուսին և գուր-
գուրալից հայր՝ ընտանեկան յարկին տակ։
Եւ Տիկին Վերթին, իր ամուսնական ու մայ-
րական պարտաւորութեանց հաւասար անձ-
նութեամբ կը կատարէր բարեգործու-
թիւններ զորս պարտականութիւն մը կը սե-
պէր նոյնպէս։ Ոչ ոք իր գուռը բախած էր՝
առանց խնդրած նպաստը կամ օժանդակու-
թիւնը մերժուելու։ այլի կիներ, չքաւոր
տղաք, աղքատներ, անկեալներ, երախտա-
գիտութեամբ կը յիշէին զինքը ու լալով հե-
տեւեցան իր դադաղին։ Ասոնցմէ դուրս, ու
ասոնցմէ վեր, կրթասիրական ու բարեսիրա-
կան խոհանարանով ապրող կիներ էր անիկա,
ինչպէս կը պատմեն զինքը մօտէն ճանչցող-
ները։ Ինքն էր, որ քանի մը տարի առաջ,
այնքան հետամուտ եղաւ աղջկանց բարձրա-
գոյն կրթութեան յատուկ վարժարանի մը
հաստատման որուն համար նիւթական մեծ-
կակ զոհողութիւն մըն ալ ընելու յօժարակամ
էր։ Արէտ, ժամանակին, Արեւելի մէջ եր-
կարօրէն գրեց կրթական այս օգտաշատ խոր-
հորդին վրայ, առանց հրապարակելու Տիկին
Կիւլպէնկեանի անունը՝ որ համեստօրէն սքօղ-
ուիլ կ'ուզէր։

* * *

Կարճատե՛ բայց անողորմ հիւանդութիւն
մը, քանի մը օրուան մէջ, զգեալեց այդ
տակաւին երիտասարդ կեանքը։ Եւ Տիկին
Կիւլպէնկեանի մահով կ'անհետանայ ո'չ միայն
մայրը և ամուսինը իր ընտանեկան սիրելի
յարկէն, ուր սուգ և արամութիւն կը թողու,
այլ և հանրութեան համար միշտ յարգելի
կինը, աղքատասէր, բարի, առաքինի։ Այս
գիտակցութիւնն էր որ առաջ բերաւ ցաւի
ընդհանուր ու անկեղծ արտայայտութիւն մը
անոր դադաղին շուրջը, իր վշտահար ամուս-
նոյն վայելած ընդհանուր յարգանքին ու հա-
մակրանքին աղգած վշտակցութեանը հետ,
Գատրգիւղէն մինչև Եւտի-գուլէ, Հիւանդա-
նոցի շրջափակին մէջ, ուր Կիւլպէնկեան գեր-
դաստանի դամբարանին մէջ տարին հանգ-
չեցնել վաղամեծ Տիկինը մարմինը, արցունք-
ներով, աղօթքներով և օրհնութիւններով։

Այս հակիրճ տողերուն մէջ ամփոփելով մեր
սպաւորութիւնը Տիկին Վերթին Կիւլպէնկ-
եանի մահուան վրայ, — որուն կեանքը այն-
քան օրինակելի կողմեր ունէր, առանձին և
հանրային տեսակետով, — Մասիսի Խմբագրու-
թեան խորին ու անկեղծ ցաւակցութիւնները
կը յայտնենք հրապարակաւ՝ վշտահար ամուս-
նոյն՝ Պատրիկ էֆ. Կիւլպէնկեանի ու զաւ-
կընեւուն, ինչպէս նաև Կիւլպէնկեան և Մա-
նուկեան սգաւոր ընտանիքներուն։

S. Ս.

Տիկին Վերթին Պ. Կիւլպէնկեանի մահուան
առթիւ «Վոխան ծակեկեփունջի» Հիւանդա-
նոցին եղած դրամական նուէրներուն գու-
մարը կը հասնի 200 ոսկիի։ Նուերատու-
թիւնները կը շարունակուին տակաւին եւ հա-
ւանական է որ հասնին աւելի մեծ գումարի
մը, իբրեւ յարգանքի արտայայտութիւն մը
որ հաղուադէպ կերպով այս համեմատու-
թիւնը ստացած ըլլայ «Վոխան ծակեկեփուն-
ջի»ի ձեւին տակ, որ անդամ մըն ալ առիթ
կուտայ Հիւանդանոցի պատասխարեալներուն՝
օրհնելու ողբացեալ Տիկինը յիշատակը։

Յաջորդ թիւով

Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ Մ Ը

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆԻ

ՆԻԻԹԵՐՈՒ ԴԱՍԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Մէկը կար... , մէկը չկար... :

Ատենոք... , քիչ մըն ալ մամիկի պատմութիւն պատմենք :

Ատենոք, կ'ըսեմ, երկու հոգի կար, ուրնք մէկ տունի մէջ կը բնակէին : Մէկը, տանտէրը, հարուստ, ազդեցիկ էր, միւսը ծառան, ծեր ու խելացի էր : Տանտէրը կ'անուանուէր՝ Կրօնք, ծառային անունն էր՝ Գիտութիւն :

Դարեր անցան այսպէս մէկ տան մէջ, ծառան աշխատեցաւ գիշեր ցերեկ տանտիրոջ հսկողութեանը տակ, հետեւեցաւ անոր ուղղութիւններուն, հակառակեցաւ անոր և ոչ մէկ քմահաճոյքին, որովհետեւ ան ատեն Գիտութիւնը—հակառակ այսպէս կոչուելուն—տգէտ էր, և միակ գիտունը՝ տանտէրն էր :

Օր մը եկաւ որ ծառան իրազեկ եղաւ իր տիրոջը գրութիւններուն, սկզբունքներուն, առօրեայ կիրառութիւններուն : Առանց դժալի ընկալ, շատ ծանօթութիւն ամբարեց, և կարող եղաւ իր մեծին հետ վիճաբանութեան մտնելու երբեմն :

Սկիզբները, Կրօնքը գէշ աչքով չնայեցաւ անոր գործունէութեանը վրայ, որովհետեւ դայն դեռ կատարելապէս կը ծառայեցնէր իր նպատակին, և ծառան դեռ հլու էր : Բայց երբ աս վերջինին գիտողութիւնները վերաբերութիւն ունեցան սկզբունքի խընդիրներու, կենսական հարցերու հետ, ան օրը՝ գիտութիւնը տակաւ ծագեցաւ : Գրգռութիւններուն թիւը յարաճուն բաղմացաւ, ընդհանուրին ականջը հասաւ, գայթակղութիւն ծագեցաւ : Երկայն դարձ է մէկիկ մէկիկ պատմել աս ամէն անհա հաճախութիւնները : Ատենց կարգէն է կայիլէի «և սակայն կը դաւնայ»ն, ինչպէս նաեւ ճօրտանո Պախնօի երկնային մարմնոց բազմաթիւութեան գաղափարը :

Հակառակ աս ամէնուն՝ Գիտութիւնը շատ երկար դարեր ստիպուեցաւ բնակելու Կրօնքին տանը մէջ, և անոնց կատարեալ բաժանումը մեր ժամանակներուն միայն վերապահուած էր : Այսօր է որ Կրօնքի հետ առնչութիւն չունին աստեղագիտութիւնը, ասիքերագիտութիւնը, օդին, երկրաչարժներուն, ոլոռումներուն գուշակութիւնը և արձանագրութիւնը : Երկրաչափութիւն, դրահալի, եռանկիւնաչափութիւն, թուաբանութիւն, քանակութեանց ամէն գիտութիւնները, վերջապէս, իրենց առանձին տունը ունին այսօր, ուր կ'ապրին համերաշխութեամբ :

Բարոյական և ընկերային գիտութեանց դալով, իրաւագիտութիւնը, օրէնսգիտութիւնը, անտեսագիտութիւնը, իմաստասիրութիւնը, իր ամէն ճիւղաւորումներովը ըլլայ ընկերային իմաստասիրութիւն, ըլլայ գերանութիւն, ըլլայ բաղդատական իմաստասիրութիւն, ասոնց ամէնքն ալ, նմանապէս, առանձին տանիքի մը տակ կ'ապրին, և շատ դո՛ւ են իրենց վիճակէն :

Աս դանաղան գիտութիւնները սերտ խնամութիւն հաստատեցին ուրիշ շատ գիտութիւններու հետ և ասոնց ամուսնութենէն շատ հարսեր, փեսաներ, աղաքներ, թոռներ առաջ եկան : Ասոնք ալ իրենց կարգին հարսնիքներ ըրին, քառուսն օր, քառուսն գիշեր կերան ու խմեցին, և խիտ բաղմանդամ, առողջ ու հարուստ, զօրեղ ու ազդեցիկ ընտանիք մը եղաւ Գիտութեան մեծ ընտանիքը :

Մամիկս այսպէս կը պատմէր և կ'աւելցնէր. «Թալանէն խնձոր մը ինկաւ, կէսը քեզի, կէսը ինծի :»

Դժբաղդաբար՝ նոյն հաշտարար բաշխումը չկրցաւ տեղի ունենալ Կրօնքին և Գիտութեան միջև : Օր եղաւ որ, կ'ըսեն, շատ կուխներ ծագեցան մէջերնին :

Ես կուի մարդ չեմ, և եթէ դորձ մը կայ որուն էն քիչ խելք հասցնել կ'ուզեմ, որուն կը ջանամ ընտելաւորուելու, ան ալ Կրօնքի պաշտօնեաններուն գործն է : Աս վարմունքս հարկաւ հաճոյական է իրենց համար ևս, այնպէս որ ոչ ոք պիտի մեղադրէ վրայս որ ըսելով թէ ինծի չվերաբերած բանե-

րու մէջ կը մանևմ: Եթէ ամէն դրող ասչափ զգուշաւոր ըլլար, տարակոյտ չկայ որ Պ. Մեարսպ Նուպարեան ալ թարգմանած պիտի չըլլար Լա Ֆօնթէն մը:

Ինչ և է, հիմայ խնդիրը անոր վրայ չէ: Իմ ըսելիքս սա էր միայն որ անցեալները աղուոր յօդուած մը կարդացի «Մասիս»ին մէջ (*), Պատկերի և Մասունքի վրայ, և այնպէս ուժգին բացուեցաւ միտքս, այնչափ լաւ լուսաբանուեցան կասկածներս, որ այսօր կատարելապէս համոզուած եմ թէ «Հաւատք» և «Յարգանք» իրարմէ չատ տարբեր են, ստուգել, և թէ մարդ կրնայ յարգել կրօնական բան մը՝ որուն չհաւատար, բայց չկրնար հաւատալ բանի մը՝ զոր չյարգեր:

Սորիբգածելու համար այսպէս ինքնիրենս խօսած միջոցիս, յանկարծ աչքիս զարկին սատողերը, որոնց մէջ կ'ըսուէր թէ «անդրքրիստոնէական» ըմբռնումներ կան եղեր հին, չատ հին դարերու մէջ, թէ «հեթանոսական և ոչ-քրիստոնէական միտումները ու ժառանգականութիւնները» կենդանի մնացել են տարիներ ետքը, և թէ հակառակ քրիստոնէութեան ծաւալման՝ անոնք «ուժով կապուած մնացել են հեթանոսական աւանդութիւններուն և սովորութիւններուն»:

Ինծի թուեցաւ որ աս ամէնուն տակ կար բան մը՝ որ ինծի սրուած չէր հասկընալ. *aiguille sous roche*, ինչպէս պիտի ըսէր Գաղղիացին: Ան աստէն միտքս բերի մամիկիս պատմութիւնը՝ որուն մէջ րոտած էր թէ Եւրոպայի հարաւակողմի երկիրներուն մէջ միշտ պատիւ դատած են եղեր բազմաստուածեան դադափարները, և թէ սեմական ցեղը միշտ պատուեր է միաստուածութեան դադափարները: Կ'երեւայ թէ մէկ մասին մէջ դարուփոս երկիրները, այլափոս դաշտերը, որոնք կը կազմուէին լեռներէ ու հովիտներէ, կ'ըլլին, գետերէ և ծոցերէ, նախապարապս կ'ընէին զմարդ ընդունելու աստուածութիւններու զանազանութիւնը, մինչդեռ միւս մասին մէջ, աւաղուտ անապատները, անսահման ովկիանոս մը մտահար

կ'ընէին զայն Աստուծոյ Միութեան գաղափարով: Այնպէս որ՝ քրիստոնէութիւնը չէ բոլորովին կործանած հեթանոսութիւնը, այլ իրենց մէջ եղած անհամաձայնութիւնէն առաջ եկած է ոչ թէ մէկ կողմին սկզբունքներուն անհետացումը, այլ ասոնց տեսակ մը «ձուլումը»:

Եթէ Կոստանդիանոսի դարձովը շինուեցան եկեղեցիներ, նորոգուեցան նաեւ հեթանոսական մեհաններ: Եթէ ան ունկնդրեց կղերականին, ունկնդրեց նաեւ ընդերանմաներուն (*). վերջապէս, իր արձանն իսկ ուրիշ բան չէր եթէ ոչ Ապոլոնի պատկերը՝ որուն գիմագծերը շնչուած էին և անոր տեղ փորուած էր Կոստանդիանոսի դէմքը:

Աս վերջինին կարգադրութեամբ՝ Գրիստոսի ինչպէս և երկու աւաղակներուն խաչերը բերուեցան, մասունքներու ճամբիտ պաշտօն հաստատուեցաւ, հին Յունաց աւելորդապաշտութիւնները կրկին երեւցան, Տրովադայի ձիուն շինութեան ծառայած գործիքները ցուցադրուեցան, Ագիլլէսի նիզակը, Ակամէմոնի սուրը: Նկարներ ելան որոնք կը չիկնէին, պատկերներ՝ որոնք կը քրտնէին, անհամար սրբարաններ և նշխարատուիք (chasse) որոնք հրաշալի բժշկութիւններ կը կատարէին:

Հեթանոսացման աս ուղղութիւնը ծիծաղելի հետեւանքներ ունեցաւ: Հին պաշտաման բոլոր կահ ու կաղամած փոխ առնուեցաւ, մեծաշուք ծիսարան մը, փառաւոր զգեստներ, միտքը, երեքթագեան խոյրը (tiare), մոմերը, թափօրները, ջուրի սրահումները, ոսկիէ և արծաթէ անօթները, ամէնն ալ մտան եկեղեցին: Հաւադիտական (**) ցուպը եղաւ եպիսկոպոսներուն գաւազանը. սուրբերու տօները և յիշատակութիւնները բազմապատկուեցան: Մեծ քանակութեամբ փոշի և հող բերուեցաւ Պաղեստինի սրբավայրէն և ծախուեցան ահագին գիններով՝ իբր գեղթափ դուերու դէմ: Եկեղեցւոյն մէջ մոցուեցան պատկերներ և մասունքներ որոնց

(*) Մասիս, Թ. 3, «Հաւատք և Յարգանք» Մաւչեղ վրդ.

(*) Սպանդներուն փորտովքը զննող քուրմ (aruspice):

(**) Anguriale

նոյն պաշտամունքը որուեցաւ՝ զոր կուտային հեթանոսները : Պատկերներուն , ճշմարիտ խաչափայտին կտորներուն , ոսկորներուն պաշտօնը նուիրագործուեցաւ : Ասոնց կարգէն են նաև ան պղտիկ աղօթարանները , խորանները , արձանները որ կը կանգնուին Եւրոպայի մէջ փողոցները , հանրային ճամբաներուն և բարձր լեռներուն վրայ :

Կոստանդիանոսի ժամանակ էր որ , քրիստոնէութիւնը կերպարանափոխուեցաւ : Անոր դրութեամբը՝ ինկաւ մէկ կողմէն կուտաշտութեան մէջ , եւ թարձրացաւ միւս կողմէն մինչև Հելլենաց դիցարանութեանը : Երբ երկու մարմիններ իրարու կը բաղխին , կ'ըսէ իմաստասէր մը , երկուքին ալ ձեւը կը փոխուի : Հեթանոսութիւնը փոխուեցաւ քրիստոնէութեամբ , ինչպէս որ աս փոխուած էր հեթանոսութեամբ :

Ահաւասիկ ինչպէս «կը դաստորոտին» , ըստ իս ան նիւթերը՝ զոր ունինք ձեռքերնիս աւանդութեամբ : Ասոնք , կ'ապացուցանեն ստուգիւ քրիստոնէութեան հոգեկան ոյժին «այլասերումը» ան դարերուն մէջ , ինչպէս և կը հաստատեն ոչ-քրիստոնէական միտումներուն կապուած ըլլալը հեթանոսական «աւանդութիւններու , սովորութիւններու և ժառանգականութիւններու» հետ :

Տեսաք թէ ինչպէս խօսքս բռնեցի , չխառնուելով ուրիշին դործին : Մամիկիս պատմածն ալ արդէն կու գայ կը համաձայնի մեր Հայ Եկեղեցւոյ պաշտօնեաներուն քարոզութեանը հետ , որուն համեմատ աս անցքերը վերաբերութիւն չունին մեր տոհմային-եկեղեցական , աւանդական ըմբռնումներուն հետ , և տարբեր են այն յարգանքէն՝ զոր ունինք կրօնական շատ պատուական յիշատակներու մասին :

ԳՐ. ՄԱՆԻՍԱ

Պատրիկ Էֆ. Կիւլպէնկեան՝ աղնիւ գաղափարը ունեցած է հատորի մը մէջ ամբփոփելու իր Տիկնոջ մահուան առթիւ եղած լրագրական հրատարակութիւնները ու յօդուածները , խօսուած դամբանականները , հասած ցաւակցական նամակները և այլն , իբրև գրաւոր յիշատակարան մը որուն ամէն կերպով արժանի է վաղամեծ Տիկին Վերժինին :

ԳՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Լա Ռըվիւ գրական Հանդէսին յունուար 15ի թիւին մէջ Ալպէս լը Ռուա շահեկան յօդուածով մը կը ներկայացնէ Ժորժ Սանը իր ամենէն սրտազրաւ և հրայրքոտ տարիներուն մէջ : Այդ ձևուն և լայն իմացականութեամբ կինը՝ որ ունանդիկ գրականութեան ամենէն սիրելի անուններէն մէկը եղած է , կը տեսնենք իր ժամանակակից երկու մեծ երաժիշտներու՝ Լիլի և Շօթէնի հետ յարաբերութեան մէջ : Ալպէս լը Ռուա մանաւանդ կը ծանրանայ Ժորժ Սանի և կոմսուհի տ'Ակուի միջև եղած բարեկամութեանը վրայ : Շատ յատկանշական են այդ երկու գրագիտուհիներուն ներհակ ընաւորութեանց շփումը . Տիկին տ'Ակու , արկածախնդիր կին մը , իր ընտանիքը և զաւակները թողած է Լիլի հետեւելու հարաւ և ժընէվ դացած է՝ անոր ետեւէն : Գրագէտ կոմսուհին՝ խրոխտ և ինքնահաւան՝ հաճոյքով կ'ընդունէր Ժորժ Սանի նամակները որոնց մէջ ինքզինքը դրեթէ աստուածացած կը դգար : Ժորժ Սան ինքնադուր և պարզ էր ընդհակառակը . իր նամակներուն մէջ երեւան կու գայ դորովանքով լեցուն սրտի մը մարմաջը . Լիլի ճանչցած է զանիկայ 1834ին : 1811ին ծնած էր Հունգարացի համեստ ընտանիքէ մը և իր կանխահաւ տաղանդը առաջին օրերէն զինքը տարած էր յաջողութեան . անվերապահ ասանկեղծ բարեկամութիւն մը ունեցած են իրարու վրայ . Ժորժ Սան , սակայն , մասամբ ցուրտ մնացած է Լիլի նկատմամբ , թէև մեծ երգահանը հրապուրիչ երկտապաղ մըն էր , շատ չնորհալի և անհունապէս գրաւող «որ սիրտերը կը քաշէր ետեւէն և իր քմահաճոյքները կը քաղէր ինչպէս պարտէզի մը մէջ ծաղիկներ» :

Շօթէն երեւոյթով գեղեցիկ էր , բայց իր երաժշտական հանձարը չուսով գրաւեց Ժորժ Սանի սիրտը . հաշակաւոր Բոլոնացի երաժիշտը 28 տարեկան էր այն ատեն և որոշ չգիտցուի թէ ինչպէ՛ս և երբ զիրար ճանչցան : Ոմանք կ'ըսեն թէ Լիլի և Տիկին տ'Ա-

կու իրենք ներկայացուցած են Շօրէնք Ժօրթ Սանի և Հարաչար զղջացած են յետոյ . կարելի է նաեւ որ առաջին առեակցութիւնը տեղի ունեցած ըլլայ կոմսուհի Մարկիանիի տունը . ամէն պարագայի մէջ , կոմսուհի ա'Ս. կու չափազանց նախանձամ է , կծու տողեր ուղղելով իր նախկին բարեկամուհիին . ասիկա արդեւ չէ եղած որ Շօրէնք տասը տարիի չափ մտերիմ բարեկամը մնացած ըլլայ Ժօրթ Սանի որ մայրական անձնութիւն մը ունեցած է մանաւանդ հանձարաւոր երաժիշտին հիւանդութեանը միջոցին , զանկայ առաջնորդելով երկար ճամբորդութեան մը :

Ինչ եղաւ պատճառը իրենց դժուարութեան :—Ալպէս լը Ռուա կ'ենթադրէ թէ Շօրէնք վիրաւորուած էր Ժօրթ Սանի Լիւքեմիա Ֆլորիանի վէպին մէջ իշխան Բարօլի տիպարը իր անձին աղնարկութիւն մը կարծելով . ասիկա պատահեցաւ 1847ին , բայց այս մասին տարբեր կարծիքներ ալ յայտնուած են : Իրողութիւնը սա է որ այդ դժուարութեան պատճառը մնաց փոխադարձ դաւանիք մը զոր երկուքն ալ տարին գերեզման :

* * *

Թէեւ բաւական տոկոս անցաւ Զօլաի մահուան վրայ , բայց դեռ եւրոպական մամուլը չառ խանդավառութեամբ կը զրադի մեծ վիպասանովը : Գերմանական Հանդէսի մը մէջ Ստոյֆ Պարթէլ կը գրէ «Զօլա անտարակոյս բանաստեղծ մըն էր . բայց ոչ այն մեծ բանաստեղծներէն զորս մարդկութիւնը ունեցած է . անիկա հանձար մը չէր : Օթթօ Սթօնէլ աւելի առաջ երթալով , անոր դործը պլանդակ ու աններդաշնակ կը կոչէ : Ընդհակառակը Վիլլի Ռադ կը սնդէ թէ «Ինչպէս ամէն ուժով հակադդեցութիւն , Զօլաի իրապաւր վարդապետութիւնը անհրաժեշտ էր արուեստին» . Լեքթուա սարսիական Հանդէսին մէջ Տիկին Բարտօ Պազան իր անաչառ յօդուածը կը վերջացնէ սապէս .—«Իրաւ է որ Զօլաի շատ յատկութիւններ կը պակսին , բայց իր իրական և բարձր յատկութիւնները կը բաւեն իր յիշատակը անմահացնելու» : Զօլաի տիեզերական ազդեցութիւնը գրականութեան վրայ անդամ մը եւ կը հաստատուի այս միահամուռ հետաքրքրութեան առ-

ջեւ , իրմով զրադելու . կը տեսնենք թէ մինչև Հարաւային Ամերիկայի մէջ սա տողերը կը նուիրեն իրեն . «Զօլաի գեղեցկագիտական մէթոդը շատ նշանակելի ազդեցութիւն մը ունեցած է լատին Ամերիկայի վրայ ուր հռչակաւոր վիպասանը կը համարուի գրական դպրոցի մը պետը և իրեն հետեւողներ ունի , մեծ թուով երիտասարդ ու խանդավառ գրագէտներ» որոնք անոր տեղ կու տան Օկիւսթ Բոնիթի քով :

Մեր աշխարհիկ գրականութիւնը որ գրեթէ միշտ ազդուած է ֆրանսական մատենադրութեան , ինչ չափով արդեօք հետեւած է Զօլաի և իրմէ ետքը եկող վարպետներուն : Կը տեսնենք թէ մեզմէ անոնք որ առիթը ունեցած են հետեւելու դարավերջի գրական յեղաշրջումներուն , կոյցած են արտադրել ինքնորոյն և անկաշխարհ գրականութիւն մը , իրականութեամբ արտիտուն : Ընդհակառակը , տարտամ մտքերն են որ հետզհետէ օտարացած են մեր արեւոտ ու կեանքով զեղուն բարքերէն և առաջ բերած են անհարազատ ու կեղծ գրականութիւն մը ուրկէ խորապէս ազդուած են նաեւ մեր ընտանեկան սովորութիւնները , մեր ընկերային բարքերը եւն . :

Հետեւելով հանդերձ մեզմէ դուրս և մեզմէ ուժով գեղարուեստական և գրական դահազան շարժումներուն , կրնայինք փոխանակ անկարեւոր և տժգոյն գրականութիւն մը կաղմելու : մեր ուրոյն ջանքը և ինքնաաւագ աշխատութիւնը բերել գրական ընդհանուր յառաջդիմութեան :

ԶԱՊԷՂ ԵՍՍՍԵԱՆ

ՄԱՆՈՒՅԱԿԸ

Մանուշակը մարգեռուն մեջ,
Յար երազուն, կարախմակ,
Կ'ապրի իր կեանքն համեսունակ,
Ու կը սպառի սիրով մ'անեօք:

«Ա՛հ, կ'ըսեք ան՝ հեզն իմնիրեն,
«Սիրուն շինեք քեզ զիս Փլորան,
«Վեցիւն կ'առնեք արքին վերան,
«Ու բո՛ւնէի այնեղ միայն:»

Գարնան գորգին վրայ դալար,
Կ'երգեր հովիւ աղջիկն աղուոր.
Հրապուրիչ եւ բեւաւոր,
Ու խոտերուն մէջ ման կուգար:

«Վա՛յ ինձ, ըսաւ, քե՛ քաղէ զիս,
«Իմ մօտերս կը օրջի ան,
«Պիտի մեռնիմ ես աննշան,
«Պիտի ծծե՛ բոյրը ծոցիս:

«Հովիւ աղջիկն խօս հեռասաւոր,
«Պիտի արբեցայ բուրումնս.
«Լա՛ւ ե մահը բան այս կեանքս.
«Սիրունն մը սիրուիլ չա՛րժեք:»

Աղջիկն անցնի դողդոջ քայլով
Նեկչոտ ծաղկին նիւթ փոփկեմ,
Բայց ոտները հոգին հանեմ
Մանուշակին՝ հոգեխրոնով:

«Է՛հ, ինչ օգուտ, մեռնիմ պիտի,
«Գոնե՛ անոր փոլը երթամ.
«Սակայն բնաւ չպիտի լամ,
«Քանի՛ որ ա՛ն մոռցաւ ինձի:

ՖԼԱՍԺ

Այս համակրելի երկտասարդը, որ իր սիրուն քերթուածներուն տակ Ֆլասժէ կը ստորագրէ, Արմաշի Դպրեւանքին նորընտիր բրոֆէսորն է Փրանսերէնի: Պ. Ֆլասժէ իր ուսումն ստացած է Պրզանսօնի՝ Ժ.Թ. դարու մեծ բանաստեղծին ծննդավայրին մէջ, և իրաւ ալ իր բանաստեղծութեանց մէջ Հիւսկոյական ներշնչութիւնը մը և հրապուր մը կայ, որուն տակ սքօղուած կը մնայ սակայն դաւաժարի սերմը: Ծաղիկները անուն քերթուածով, որ մէկ քանի ամիս առաջ հրատարակուեցաւ Պոլսական Փրանսերէն թերթի մը մէջ, Ֆլասժէ հոգեբանական բարդ խնդիրներ կը յուղէր և կեանքին իմաստասիրութիւնը կը ներկայացնէր ծաղիկներու բուրումին հետ: Եւ Մանուշակը, նորագոյն արտադրութիւն մը, ուրիշ բան չէ արդէն, այլ այլաբանօրէն գծուած մէկ պատկերը սիրամուլ աղջիկներուն ու պարմանիներուն անանուն և աննշան անէպոսին:

ԼԵՒՈՆ ՔԻՐԻՇՃԵԱՆ

ԱՅԾԵՄՆԻԿԻ ՓՈՒՆԶԸ

(Le bouquet de chevrefeuilles)

ՎԷՊ ԱՆՏՐԻ ԹԵՕՐԻԷԻ

Թ. 5.

Պօն Քօանի պանդոկը՝ ուր կը ճաշէի՝ վաճառանոցի հրապարակին մէկ անկիւնը կը յուցադրէր իր ժանգոտած տախտակը: Ամսական 60 ֆրանքով՝ հոն կը ճաշէի ու կ'ընթերէի լիառատ, պատրաստուած առանձին սեւ զանի մը վրայ, ունենալով ուրիշ երեք սեւ զանակիցներ ալ: Նօտարը որուն վրայ խօսեցայ արդէն, հարկահաւաքը և ջորիի վաճառի վաճառական մը, քսակը պարարտացնելէ ետքը գործէ քաշուած: Հարկահաւաքը միշտ զանձուով և օլիի դաւաթներու պարսլումով բլթացած մարդու մը տիպարն էր: Նախկին ձիավաճառը աչնան այգիի որթատերեւներու նման խաղուարտադէմ այտերով մանրակամման չրթունքներով ու քիչ մը արցունքոտ խորանանկ աչուքներով մարդ մը ըլլալով՝ առատօրէն կ'ուտէր առանց ձիկ մը հանելու ու ամէն ընթերիքին Անկամուայի վարնոց գլխիէն չիլ մը կը պարպէր: Այս բնք սեղանակիցներէն նօտարը միայն նրբամիտ մէկն էր, սիրուն նկարագիր մը ունէր և խօսակցութեանց ու զուարճաբանութեան աղբիւր մը կը ներկայացնէր: Գեղահասակ, մեծ լայն ուսերով, դանդուր ու չիփշտակ սև մօրուքով: Անունը Ալսիտ Տիւլլինեօ էր ու տարիքը երեսունը հինգի մօտ: Քաղցրասիւս մէկն էր, նաեւ կատաղի որսամու մը: Խիստ բանուկ զրատնեակ մը ունէր, ու իր երկրին մէջ փորձառու մարդու մը անունը վատուած էր:

Եւ որովհետեւ պաշտօն ունէի քննելու իր գործերը ու իր տեսարանները, հետո մտերմօրէն կը վարուէր ու յատուկ համակրանք մը կը տածէր ինձի նկատմամբ: Խրատներ կուտար սիրայօժար, ու երբեմն ալ, ճաշէն ետքը, պոտյոթի կ'եղէինք միասին, քաղաքին հին գերեզմանատուններուն շուրջը:

Տիկին Տարվիլի դալուն ձիւղ հետեւեալ

օրը, որովհետեւ իրիկունը դաղջ ու հրապու-
րիչ օդ մը կար, մեր պտոյտը մինչեւ գետե-
զերք երկնցուցինք: Մթնոլորտին սիւռած
մեղմութիւնը արամադիր վիճակի մը մէջ
դրած էր զիս մտերմութեան, ու հետեւաբար
ընտել էի: Հեշտագին խաղաղութիւն մը կը
տեղար աստղազարդ երկինքէն թաւաստուեր
ընկուզենիներուն վրայ որոնց ստուերներովը
շրջապատուած էինք: Մեղմ հառաչանքի մը
նման կը լսուէր քնարեր ջուրին կարկաջը,
ու մերթ, խիստ հեռուէն, եղեգնուտէն, թուշ-
նոց բոյներուն մէջէն ճըլլառուք մը:

—Վաղը, ըսաւ Պ. Տիւվինեօ, չէկ կա-
կաքաւի լաւ որսորդութիւն մը կ'ըլլայ: Կը
սիրէ՞ք որսը, Պ. Մարտէլ:

Ժխտական էր պատասխանս, հաղիւ գի-
տէի հրացան մը բռնել ու ընաւ հրապոյր մը
չէի գտներ ցօղոտ խոտերուն մէջ վաղվառե-
լէն՝ առեղծուածային երէ մը խուզարկելու
համար:

—Աղէկ կը հասկնամ, կրկնեց նոտարը
ուրախութեամբ, կարմիր կաքաւները ձեզի
չեն հրապուրեր: Կը նախընտրէք որսալ սի-
րահրապոյր կաքաւները... տարիքի բերմունք:

Շնորհիւ աղջամուղջին՝ չկրցաւ տեսնել
կարմիրս, ու չնշմարեց խուոված դէմքս:
Այնպէս հասկցեր էի որ սատանորդի նոտարը
արդէն իսկ գուշակած էր սիրալին մտաղբա-
ղումս ու այնպէս կը կարծէի թէ ասիկա
նախատական ակնարկութիւն մըն էր Տիկին
Տարվիլի համար:

—Կը սխալիք, ըսի հաստատապէս, լուրջ
կերպարանք մը առնելով, անոնք ալ միւս-
ներէն աւելի չեն հրապուրեր զիս:

—Ոչ որսորդ ոչ սիրահար, գոչեց, ուրեմն
սոսկալիօրէն պիտի ձանձրանաք հոս, որով-
հետեւ այս երկիրը մի միայն այս երկու դըօ-
սանքները կրնայ մատակարարել ձեզի:

—Բոլոր օրը սաստիկ զբաղած եմ, կրկ-
նեցի, ու իրիկունն ալ կը գրեմ կը կար-
դամ:

—Կը գրէք... ինչ... Արձանագրու-
թեան վրայ գիրք մը:

—Բնա՛ւ, պատասխանեցի, անպարծ հա-
մեստութիւն մը կեղծելով, ոտանաւորը կը
սիրեմ ու երբեմն ալ կը գրեմ:

—Ոտանաւոր... բացաղանչեց արհամար-
հոտ, հա՛, հա՛, հա՛, անօթութիւննիդ կը խաբէք
միայն յանգեր գտնելով, արհամարհելի բան
մը չէ ադ, բարեկամս, երբ մարդ երիտա-
սարդ է ու առողջ: Աւելի լաւ կըլլար, հաւա-
տացէք, չիք հագուիլ ու միտքը սրել՝ հրա-
պուրելու համար կիները:

—Ուզածնուդ պէս կը խօսիք, բան մը
չեմ հասկնար կնահաճ քծնաբանութենէն ու
մանաւանդ կը վախնամ անոնցմէ:

—Վա՛խ... ուրեմն վարուիլ չէք գիտեր:
Գրաւ կը դնեմ որ լաւ կը հիւսէք զգացումի
պարանը փոխանակ ուղղակի նպատակին դի-
մելու... Կը տեսնէք էն տխմարներն ալ և
նոյն իսկ խելացիներ որոնք սրտերնուն մէջ
փափագ մը ունին սիրաբանելու... միայն դի-
րենք լափող սոյն փափաքը ծածկելու մէջ կը
դնեն իրենց փառքը ու կը թողուն ինքզինք-
նին որ մինչեւ վախճանը հասնին անոր: Եթէ
կուղէք յաջողիլ կանանց քով, երբեք կա-
րեւորութիւն մի՛ տաք ոչ անոնց կեղծ պար-
կեշտութեանը և ոչ ալ ընդդիմութեանը: Ա-
նոնք կ'անարդէն ընդհանրապէս երկչոտները
ու դանոնք կը խաղցնեն, կը կենան ա-
մէնէն գեղեցիկ պահուն ու գործը անկատար
կը թողուն... ահաւաստի տեսականը, միա՛միտ
բարեկամս, ես միշտ այնպէս վարուած ու
յաջողած եմ գրելիք:

Մտիկ կ'ընէի այս խորհուրդներուն որոնք
չահագրգիւ կերպով կ'ուզուէին ինծի, մը-
տիկ կ'ընէի պօզանքով ու հիացումով խառն:
Աւսիտ Տիւվինեանի տուած ապահովութիւնը,
իր սնդակազմ մարդու գիրքը, ու իր բեղուն
ըրառութիւնը Միւսէի կատակերգութեան կլա-
վարօշը միտքս կը բերէին: Նոտարը պատկա-
ռանք կ'ազդէր ինծի, ու սրքան ալ ուսմիկ
ու անչուք՝ կը նախանձէի սակայն այն համար-
ձակութեան վրայ որով յաջողած էր—ճիշդը
խօսելով—միշտ կանանց քով:

—Գնա՛ մանոց քով, յանդու՛գն եղիր,
չարունակեց անիկա, առիթներ անպակաս
պիտի ըլլան միշտ... Հա՛, աղէկ միտքս ե-
կաւ, աւելցուց ուսերը զարնելով, ձեր դըր-
ցուհիին վրայ չէք խօսիր, սիրուն Տիկին
Տարվիլի վրայ: Զեղի ո՞վ պահապան դըրա-

անոր վրայ, առանց ակնարկ մը իսկ հետեւ
լու պիտի անցնիք երթա՞ք: Հաւատացէ՛ք
որ ձեռնոցի մը պէս պիտի յարմարէր անիկա
ձեզի:

— Ատելի՛ բան է, պատասխանեցի կեղ-
ծաւորաբար, պաշտօնակցի մը կինը:

— Ո՛հ, խիստ բարակը կը վնասէ՛ք, սի-
րելիս, խղճեմնիդ հանդարտեցուցէ՛ք ինդ-
րեմ... Անշուշտ առաջինը դուք չպիտի ըլլա-
մի՞ք...

— Կը կարծէ՞ք, գոչեցի սրտիս մէջ հա-
խանձի սլաքով մը:

— Ես բան մը հաստատել չեմ ուզեր, Ը-
սառ խօսքը ուղղելով խոհեմաբար: Բայց
երբոր դեռատի սիրուն կնիկ մը Տարվիլի
չափ տգեղ էրիկ մը ունենայ, կարծեմ թէ
հերկելի է քիչիկ մը զայն խաբել. եթէ ար-
դէն եղջերաւորուած չէ այդ մարդը, գէթ
ըլլալու վիճակուած է... Անհրաժեշտ իրողու-
թիւն մըն է աս, եթէ ես քու տեղդ ըլլայի
կը նախընտրէի գործը ես ինքս լինցնել քան
թէ ուրիշի մը միջամտութեանը... սպասել:
Դրոցունիիդ հետ խօսելու առիթը չունեցա՞ր
երբեք:

— Այո՛, ըսի, խօսեցանք երկու անգամ...

— Ու այսքանը բաւական չեղա՞ւ բորբո-
քելու ձեր սէրը... Սա՛տանորդի... սիրող
սառա՞ծ է:

Ասպետական ձեւով մը վրաս գթալու հա-
մար ցոյց տուած կերպարանքը կը զայրացնէր
զիս, ու շատ կը բաղձայի ցոյց տալ թէ ո՛չ
անմիտ էի և ո՛չ ալ տխմար՝ կարծածին պէս:
Չէի վստահեր սակայն: Կը կասկածէի որ իմ
չաղակրատութեամբը պչրասէր դրացունիւս
հետ ունեցած սիրաբանութեանս գաղանիքին
թափանցել կ'ուզէր: Ուրեմն վերապահու-
թեամբ համակերպեցայ իրեն, տիկին Տարվիլի
հրապուրիչ ու զգլխիչ կին մը ըլլալը խոս-
տովանելով միայն:

— Բայց, աւելցուցի, ցարդ մեր յարաբե-
րութիւնները պարզ գործի յարաբերութիւն-
ներ միայն եղած են: Տիկինը ինծի հետ խիստ
քաղաքավարութեամբ վարուելով քաջալե-
րութիւն ներշնչած չէ այցելելու իրեն, ու
անշուշտ անխոհեմ պիտի կարծուէի առանց
հրաւերի իրեն ներկայանալով:

— Պատրուա՞կ կը պակսի... հնարամտու-
թիւն չունի՞ք, ահա՛, ծաղրելի բանաստեղծու-
թիւնդ կրնայ օգտակար ըլլալ ծանօթութիւն
մը հաստատելու համար անոր հետ: Խիստ
զգայնատ է ան, եթէ ինքզինքնիդ քիչ մը
ստպետական ու փափկամկտո ցոյց տուք, յու-
ջողելու բազդը կը վայելէ՛ք... Ուսանաւորներ
գրեցէ՛ք... վիպային գեղեցիկ կտորներ կար-
դացէ՛ք, ձեր ուշադիր ակնարկներն ու հա-
ռահները պիտի գտնեն անշուշտ անոր սրտին
ճամբան... Քիչ մը երկայն կ'ըլլայ, լայց և
այնպէս կրնան կան սրտնք կ'ախորժին այս
տեսակ սիրաբանութիւններէ: Ասիկա իմ
սիղբունքս չէ... համբերութիւնը ինծի հա-
մար չէ... Դուք, ընդհակառակը, երկասարկ
ներդ, իրօք այս տեսակ բազդային դրութեան
դասակարգին վերաբերելու համար ստեղ-
ծուած էք կարծեմ: Շատ անմիտ պիտի հա-
մարիմ ձեզի եթէ այդպիսի դրացնութեան մը
օգուտ չքաղէք:

Կը լռէի, սրտիս խորէն սակայն մտրակ-
ուած կը զգայի ինքզինքս առաջ մղուելու
համար: Այս գործնական ու խիստ անշահա-
խնդիր խրատները աւելի վստահութիւն կը
ներշնչէին ինծի՝ իրեն ու ինքզինքիս վրայ
որովհետեւ կանխաւ խօստովանած էր արդէն
թէ տիկին Տարվիլ իր ճաշակին յարմար չէր
Շնորհակալ էի Տիւլինեանի՝ մինչև իսկ զրօ-
սանքներ վնասուելու մասին հետո խորհրդակ-
ցիլ բարեհաճած ըլլալուն համար: Կ'ուրա-
խանայի որ իմ վրաս կը մտածէր անիկա ու
կը գնահատէի անոր հանճարեղ տրամաբա-
նութիւնը: Եթէ, ինչպէս որ կը պնդէր ա-
նիկա, տիկին Տարվիլ զգայնատ ու վիպային
էր, անշուշտ աւելի պիտի համակրէր ինծի:
Ասիկա լաւագոյն կը համապատասխանէր իմ
փափաքներուս ու այս փափակ մանրամաս-
նութիւններով երկջողութիւն կը հանդար-
տեցնէի: Կոչու ու կոպիտ սիրահարութեան
վրայ քիչ ճաշակ ունէի: Նախաձեռնար կը հա-
մարէի ճամբորդել մեղմիկ ու սիրուն ճամ-
բաներէ, կանգ առնելով մէն մի կայան
վրայ: Ասիկէ զատ, եթէ նոստարը քծնէր անդ
ու յարաբերութիւնս լաւ ըլլար, ան առան-
հարուածները անպակաս պիտի ըլլային ինծի
հետ ունեցած յարաբերութեանց մէջ:

Որքան ալ լուռ ու մունջ մնայի, Տիւ-
վինեան կարծես կը գուշակէր որ իր խրատ-
ները ազդեցութիւն ըրած էին վրաս :

— Սիրելիս, կրկնեց, անճարակութիւն մի՛
ըներ... այդ սիրուն կինը բոլորովին քու
մնտաւածդ է : Անախնակալէն օգտուէ՛, այցելէ՛
իրեն, ուշադիր ու ծառայելու տրամադիր
ցոյց տուր ինքզինքդ ասպետական զիրքով :
Անշուշտ պիտի գլխածուի ու ինչպէս որ ար-
դէն գիտեմ բնաւորութիւնը, էրկանը ներ-
կայութեան տաղտուկէն ազատ ըլլալով՝ եր-
կար հեծել չիտար ձեզի :

Գաղաք հասանք թե թեի, զինքը մինչեւ
սենեակին դուռը տարի ու բաժնուեցայ բա-
րեկամարար : Բնակարանս վերադարձիս սկսայ
հաճոյքով մտածել այդ խօսակցութիւններուն
վրայ : Վանդակապաւը հրելուս պէս, աչքերս
տնկեցի Տիկին Տարվիլի յարկարածինը : Հոն
ամէն ինչ խաղաղիկ քունի մէջ էր, փախուկ
համբոյր մը զրկեցի տիկնոջ պատահաններուն
ուղղութեամբ ու անկողին մտայ՝ յատակա-
դիմս պատրաստելու համար :

Զ.

Հետեւեալ օրը, գրասենեակին գոցուելէն
ետքը, Տիկին Տարվիլի տունը ներկայացայ :
Փոքրիկ ողբասունհին թաքուն նայուածքով մը
զիս վերէն վար քննելէն յետոյ առաջին յար-
կը հրամցուց ու զիս առաջնորդեց սենեակ մը
որուն պատահաններուն կիսաբաց վարագոյր-
ներէն խորհրդաւոր կէս լոյս մը ներս կը
թափանցէր : Գնաց իմացնել տըրուհիին : Այս
միջոցին, ժամանակ ունեցայ աչքէ անցնե-
լու լայն սրահը ուր կը գտնուէին : Կը թուէր
թէ զարդախուցի ու միանգամայն դահլիճի
տեղ կը ծառայէր : Տիկին Տարվիլ զիզած էր
հոն քիչ մը աններդաշնակ կերպով շարժուն
կարասիներ որոնք իր պաշտօնէի կնոջ հա-
մետ գարդը կը կաղմէին : Ուղղաձիգ բաց
դաշնակ մը կար պատահաններուն միջեւ գըրա-
նուած պատին առջեւ : Կանանչ տունկ մը
կը ծածկէր չըմկնէին կրակարանը՝ որուն վը-
րայ պատի արծաթաղօծ ժամացոյց մը կախ-
ուած էր կէս արոյրէ կանթեղներու միջեւ :
Դորդէ բարձեր ու ասեղնադորձուած կիւիւր-
ներ թաշեայ աթոռները կը զարդարէին :

(Շարունակելի)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Կալս Դնանասում.—Վեհ. Սուլթանը բա-
րեհաճած է Բ. կարգի Մէճիտիյէ պատուա-
նշան շնորհել Տօքթ. Կ. Օրմանեան էֆ.ի և
Սանիէի աստիճան՝ Պատրիարքարանի արձա-
նագրութեան զիւանի տեսուչ Մկրտիչ էֆ.
Մելիքեանի : Դ. կարգի Մէճիտիյէ պատուա-
նշան և Սանիէի աստիճան՝ Տօքթ. Ճէվա-
հիրճեան և Տօքթ. Ինճեան էֆ.ներու : Լի-
ազաթի ոսկի շքադրամ՝ արհեստաւոր Անդ-
բէաս աղայի և Իֆթիխարի արծաթ շքադրամ՝
Յովհաննէս աղա Գոնտոեանի : Ե. կարգի
Մէճիտիյէ պատուանշան՝ Պատրիարքարանի
բարապաններէն Պօղոս աղա Սրապեանի :

Ս. Պատրիարք Հայրը որ քանի մը օրէ ի
վեր, ստամոքսի տկարութեան պատճառով,
իր բնակարանը կը մնար, հինգշաբթի Պատ-
րիարքարան գնաց : Ն. Սրբազնութիւնը յա-
ռաջիկայ չորեքշաբթի. պիտի նախագահէ
Խառն Ժողովին որ, ինչպէս օրաթերթերը
ծանուցին, լիազուար նիստ մը պիտի ընէ՝
ատենապետութեամբ Վսեմ. Գաբրիէլ էֆ.
Նորատուկեանի :

Պատրիարքաւանի աշխարհական հրաւիրակ
Յարութբուն էֆ. Գարամանեան, որ պաշտօն
ունի Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը իր Աթոռ
առաջնորդելու, չորեքշաբթի օրը Երուսաղէմ
ուղևորեցաւ : Մեկնելէ առաջ, Գարաման-
եան էֆ. այցելեց Ս. Պատրիարք Հօր ինչ-
պէս նաեւ Երուսաղէմի Պատր. Փոխանորդ
Երէցեան Սրբազանի :

Կիւրիքի ուրբանոցին Հոգաբարձութիւնը
տեղեկադիր մը զրկած է Պատրիարքարան,
ուսկից կ'երեւայ թէ այդ ուրբանոցը 1899
ապրիլ 1ին հաստատուեր է : Ա. չըջանին մէջ
40 դիշերթիկ և 7 ցերեկեայ աշակերտ ու-
նեցեր է. Բ. ին՝ դիշերթիկներուն թիւը ան-
փոփոխ մնալով ցերեկեաներուն թիւը հասեր
է 14ի և Դ. չըջանին 20ի : Դ. և վերջին
չըջանին մէջ նոյն յարկը ունեցեր է 35 ձրիա-
վարժ աղաք : Տեղեկագրին մէջ տեղեկու-
թիւններ արուած են նաեւ ուրբանոցին քա-
ռամուսայ մատակարարութեան վրայ : Ուրբա-
նոցին յարակից արհեստանոցը ունի երկու

ձիւղ, կօշկակարութիւն և կահագործութիւն. առաջինը հաստատուած է 1900 տարւոյ մէջ, իսկ երկրորդը՝ 1901ին: Որքանոցի աշակերտներէն 15ը կօշկակարութեան և 10ը կահագործութեան արհեստին կը հետեւին: Հոգաբարձութիւնը ի վերջոյ կը խնդրէ Պատրիարքարանէն՝ որ որքանոցին յարակից արհեստանոցը ժամանակ մը ևս շարունակէ, որմէ գոյացած շահով թերեւս կարելի ըլլայ մաս մը բոլորովին կարօտ որբեր խնամել ժամանակ մը, մինչև որ կարողանան ինքզինքնին հոգալու վիճակի հասնիլ:

Ուրժայի նախկին առաջնորդ Տ. Խորէն եպիսկ. Մխիթարեանի մահուան գոյժը հեռադրու հաղորդուեցաւ Պատրիարքարանի, շաբթուս սկիզբը, Վիճակին առաջնորդ Տ. Անանիա վարդապետի կողմէ: Հանգուցեալ ծերունազարդ եպիսկոպոսը բեղուն գործունէութիւն մը ունեցած էր թէ՛ իւրեւ եկեղեցական և թէ՛ իւր գրչի մարդ:

Դոճուքեամբ կը ծանուցանէր թէ, Սուրհանդակ օրաթերթը՝ կարճատեւ դադարումէ մը ետքը՝ երկուշաբթիէն վերսկսաւ հրատարակուիլ արտօնութեամբ Տպագրական Տեսչութեան:

Թաղեւոլ մեջ յանուն եկեղեցիներու և դպրոցներու ստացուած նպաստներու փոխարէն տրուած ընկալագիրներու պէսպիսութեան և ստորագրութիւններու և կնիքներու անծանօթութեան պատճառաւ դժուարութիւններ չծագելու համար, ասկէ վերջը Պատրիարքարանէ թաղերուն պիտի զրկուին Պատրիարքարանի կնիքը և Տնտես. Խորհրդոյ վաւերացումը կրող ընկալագիրներ որոնց միջոցաւ պիտի ըլլան գանձումները:

Պարսիկալի Բողոքականաց Բարձր. վարժարանին ուսուցիչներէն Ստեփան Էֆ. Մակարեանի մայրը, Այրի Տիկին Եղիսաբէթ Մ. Շըլըմեան մեռեր է անցեալ շաբթու, 68 տարեկան հասակին մէջ: Յուզարկաւորութեան և թաղման արարողութիւնը կատարուեր է հանդիսաւորապէս և թէ՛ տունը, թէ՛ եկեղեցին ու թէ՛ գերեզմանատունը պաշտօն կատարեր է Վեր. Տոքթ. Թ. Չէյմպրս: Յուզարկաւորութեան ներկայ գտնուեր է խուս բազմութիւն մը: Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք թերթիս յարգոյ գործակալին:

Իզմիրէն կը գրեն Մանգումէի. — Առաջնորդ Տ. Մեղքիսեդէկ Սրբազանին մատանին և վաթսուն տակի մէկ չէքը գողցուած է: Սակայն չի գիտցուիր թէ ո՞ր աստիճան ստուգութիւն ունին այս զրոյցները, բայց վերջապէս այսօր ամէնուն բերանն են: Սակայն ստոյգ աղբիւրէ տեղեկացուած է թէ, ժողովրդէն մէկ քանի հոգի պիտի երթան ուղղակի Նորին Սրբազնութիւնէն բացատրութիւն ուղեւոր համար թէ այս տարածախոսութիւնը մինչև ո՞ր աստիճանի ձիւղ է:

ՆՈՐ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԵ ՄԷ

Օսմ. կատակերդակ նոր թատերախումբ մը կազմուած է մայրաքաղաքիս մէջ: Այս խումբին խաղացուցակը կը կազմեն Քրան. սական զօմէսիներ ու վօսվիներ, Մէյսագ Ալէվիէ, Բայրօնէ, Ալէք. Պիսօնէ, Ալպէն Վալապրէկէ, Բիէո Վէպէնէ, Գուրդըլինէ, Էւն.: Այս խումբը բնաւ մեյքսքամ կամ ռամ չպիտի ներկայացնէ և նպատակ պիտի ունենայ լոկ հանդիսականները զուարճացնել ու խնդացնել, միշտ բարոյականի սահմաններուն մէջ անշուշտ: Խումբին անօրէն-վարիչն է Պ. Ժօրժ Կոնէ-Լէվի, Բարիզի Բորդ-Սէն-Մարթէն թատրոնի դերասաններէն: Խումբին մէջ կը գտնուին հանրածանօթ կատակերդակ Զափրաստեան, Պալթաղարեան, Փափաղեան, Հոլաս Էւն.: Դերասանուհիներուն մէջ Տիկին Դոհարիկ Շիրինեան, Պէյլեանի թատերախումբէն Օր. Մաւի Տիէր, Տիկին Վերժինի Էւն.: Նորակազմ թատերախումբը՝ բացի երեք կամ չորս արարուածներով զօմէտիներէ՝ պիտի ներկայացնէ մէկ արարով Lever մը rideauներ, դաւեշտ, մենախօսութիւն, Էւն.: Ներկայացումները պիտի տրուին Բերա Թէփէ-Պաշի թատրոնին մէջ և Պոլիս Շահապալպաշի թատրոնին մէջ: Առաջին ներկայացումը պիտի տրուի հաւանաբար յաջորդ կիրակի յաջողութիւն կը մաղթենք այս նորակազմ կատակերդակ խումբին:

Առաջին ներկայացումը, ցերեկոյթ մը պիտի սկսի Թուրքիէի Այրիներով, զօմէտի 3-րդար եւ Թէնօր Տ'Ամպէրիկեով, զատուած մէկ արար Էւն.:

Արժանատի Կ. Ս. ԻԻԹԻԺԵԱՆ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱ Օրագրի

ՄԱՍԻՍԻ Խմբագրութեան Է ԵՏՈՐԵՆՈՒ-
թեան կեդրոնն է Ղալաթիա, Քամանսօ փո-
ղոց, քիւ 8, Օսմ. Նամակասան Էտին, «Արե-
ւելի» խմբագրասունը: Հետեւաբար, քերքին
հետ որ Է Է գործ ունեցողները կը հրաւիր-
ուին հոն դիմել: Թղթասարական հասցէ,
Խմբագրութիւն «Մասիս» Շաբաթաբերքի
Ղալաթիա, Կ. Պոլիս

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱՐՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց

(Վկայեալ Բաշիգէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւ-
անդութիւններ. կը կատարէ վիրաբուժա-
կան գործողութիւններ՝ վերջին կատարելա-
գործեալ դրութիւններով:

Բարիգի, Նանսիի հիւանդանոցներուն
մէջ երկար տարիներ ոգնական-բժիշկի (էքս-
քերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնա-
կան ու փորձառական երկար ուսումնասի-
րութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ.
Պոլիս եկած Է հաստատուած է Բերա,
Թարլա Պաշը, թիւ 136:

Ծանօթ. — Հիւանդներ կ'ընդունին ամէն օր
կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, ժամը
1-4 (Ը: Ե.): Երեքշաբթի օրերը միեւնոյն
ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հի-
ւանդները:

4—20

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՇ-ՓՈՂՈՑ, Թ. 200

ԿԱԼԱՅԱ-ՍԷՐԱՅԻ ԼԻՍԷԻՆ ԴԷՄ

ԳԵ. ԵՇ. ՇԲ. օրերը պուտօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11½

ԲԵ. ԴԵ. ՈՐ. օրերը ճեմ մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամադրութեամբ

Ի Ե Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ը Ի Դ Ն

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	210,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ա Յ Ը Ի Դ Ն

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԻՆ ՆՄԱՆԸ
ԿՈՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գելչեալ գիներով: Նպատաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի զերազանց քան ուրիշ ո՛ր Է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում. որով Իւնիոնի
ապահովագրուողք ՁԵՐԻՆ են այն վնասներէն Է յուսալաբութիւններէն, որոնց
կ'ենթարկուին միշտ այն անձինք. որ շահաբաժիններու բարդման (accumulation
des bénéfices) ՅՈՐԻ Է ՎՆԱՍՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապա-
հովագրուին:

Ընկերութեան դրամասունց Է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԻԱՆ

Թուրքիոյ Է Արեւելքի Տօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թափապուրէն Խան, Օսմ. Պանայիք գիմաքը

Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ

ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ



Ընտիր

Հոտաւէտ

Խնայողական

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը թէ՛ պատրաստ՝ եւ թէ՛ օր ըստ օրէ հասնող թարմ եւ ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ գոհացում տալ թէյի նոյն իսկ էն խստապահանջ սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի դաւառներու հետ եւ յանձնարարութիւնք կը կատարուն ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր, ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմագէտ կը յանձնարարեցք անգամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը, Ճէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ եւ փոքրաքանակ թէյի ճօխ մթերք մը:

ԱԺԱՆ ԱԺԱՆ ԱԺԱՆ